




Տ. ՇԱՀԷ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱԺԷՄԵԱՆԻ ՔԱՐՈԶԸ
Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱԾԱՐՈՒՄ, ԾՐԱԳԱԼՈՅՑԻ
Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(5 Յունուար 1991 թ.)

«Եւ թագաւորութեան նորա վախճան մի՛ լիցի»:
(Ղկս. Ա. 33)

Երկար դարեր, հրեայ ժողովուրդը սպասեց նոր թագաւորի մը: Նույնիսկ երբ անոնք ունէին թագաւորութիւն, մարգարէները տեսիլքը ունեցան նոր թագաւորի մը: Ժողովուրդը չէ՛ր գիտեր թէ ինչով տարբեր պիտի լինի ան Դաւիթ կամ Սողոմոն թագաւորներէն: Մարգարէներէն իր իմացածները նոր թագաւորի մասին, տարօրինակ էին և անհասկալի:

Նոր թագաւորի ծնունդի մասին Եսայի մարգարէն ըսած էր Յիսուսի ծնունդէն դարեր ու դարեր առաջ. Ահա կոչս յղացի և ծնցի որդի և կոչեացեն զանուն նորա Էմմանուէլ: (Եսայի, Է. 14): Կոչս մը պիտի մայրանայ և ծնունդ տայ որդիի մը, որ պիտի կոչուի Էմմանուէլ, այսինքն՝ Աստուած մեր մէջ:

Նոր թագաւորի ծննդավայրի մասին, Միքիէ մարգարէն յայտնած էր թէ ան պիտի ըլլայ Բեթղեհէմի սաւանը: Եւ դո՛ւ Բեթղեհէմ տուն Եփրաթայ սակաւաւոր՝ իցես լինել ի հազարաւորս Յուդայ: Ի քէն ելցէ ինձ իշխան... (Միքիէ, Ե. 2): Եւ դո՛ւն Բեթղեհէմ, Եփրաթի սակաւաւոր տունը, պիտի լինիս Յուդայի հազարաբնակ տուններէն մին: Քեզմէ՛ պիտի դուրս գայ իմ իշխանաւորս: Եւ Միքիէ մարգարէն անելոցսած էր Բեթղեհէմէն գալիք իշխանաւորի մասին. Եւ ելք նորա ի սկզբանէ աւուրս աշխարհի: Որ կը թարգմանուի. Եւ անոր ծնունդը աշխարհի սկիզբ առած օրէն:

Վաղ ժամանակներէն յայտնուած էր արդէն թէ Բեթղեհէմի մէջ պիտի ծնի նոր թագաւորը, թէ ան պիտի գար աշխարհ սովորական մարդերու

ծնունդէն տարբեր ծնունդով, բնութեան օրէնքներու խախտումով, հրաշալի ծնունդով մը, մայր ունենալով սուրբ կոյս մը, թէ անոր մուտքը աշխարհ մուտքը պիտի ըլլար Աստուծոյ մեր մէջ, մարդոց մէջ, բայց ամենէն կարելորը՝ թէ ծնող թագաւորը ան է որ գոյութիւն ունի աշխարհի ստեղծումէն առաջ և, հետեւաբար Աստուած իսկ էր որ պիտի մարդանար:

Երկար դարեր, մարգարէներուն յայտնութիւնները մնացին անտեղծուած միտքերուն մէջ, մնացին հարցականներ, որոնց դժուար էր պատասխանել, նոյնիսկ հաւատալ: Ինչպէ՞ս երեւակայել կուսական ծնունդ մը, ծնունդը որդիի մը, որ կար արդէն աշխարհի ստեղծումէն առաջ: Ի՞նչ կը նշանակէ «Աստուած մեր մէջ»: Մի՞թէ Աստուած կրնայ բնակիլ երկրի վրայ այլ տեղ քան Երուսաղէմի Տաճարին մէջ՝ Սիոնի բարձունքին: Այո՛, երեւցած էր ան Աբրահամի և Մովսէսի, խօսած էր մարգարէներուն, սակայն բնաւ բնակութիւն հաստատած չէ՛ր մարդոց մէջ: Ե՛րբ պիտի պատահի հրաշքը Աստուած պիտի յայտնուի մարդոց:

Բազմաթիւ սերունդներ պիտի անցնէին որ կատարուէր խոստումը և յայտնուէր նոր թագաւորը, որովհետև մարդերու սիրտերը պատրաստ չէի՛ն տակաւին ընդունելու զայն: Երբ պատրաստ գտնուեցաւ մարդկութիւնը, իրապէս Աստուած յայտնուեցաւ Նազարէթի բնակիչներէն կոյսի մը, որուն անունն էր Մարիամ, Դաւիթի սերունդէն: Ան խօսեցաւ Մարիամի հետ հրեշտակին բերանով: Ան ըսաւ. **Մի՛ վախճար, ահա պիտի յղանաւ և ծնիս որդի մը, որուն պիտի տաւ Յիսուս անունը, ան պիտի ըլլայ մեծ և պիտի կոչուի Բարձրեալին որդին:** Եւ հրեշտակը անելցուց. **Եւ թագաւորութեան նորա վախճան մի՛ լիցի, որ կը նշանակէ. Անոր թագաւորութիւնը վերջ պիտի չունենայ:**

Ամբողջ մարդկութեան մէջ, Մարիամ եղաւ առաջինը որ գիտցաւ թէ եկած է աստուածայայտնութեան ժամը և թէ ի՛նքն է ընտրեալը, որ իր մաքուր մարմնին մէջ պիտի կրէ արարիչը երկնի և երկրի, թէ իրմէ ծնելիք որդւոյն անունը պիտի ըլլայ Յիսուս, թէ Ա՛ն է խոստացուած թագաւորը, որուն թագաւորութիւնը վերջ պիտի չունենայ: Այսպէս եկաւ Աստուծոյ թագաւորութիւնը երկրի վրայ, թագաւորութիւն մը, որուն սահմանները պիտի ըլլային ամբողջովին բաց՝ ընդգրկելու չափ ամբողջ աշխարհը, թագաւորութիւն մը, որուն հայրենիքը պիտի ըլլար ամբողջ աշխարհը և մայրաքաղաքը՝ մարդուն սիրտը:

Հրաշքներուն հրաշքը կատարուեցաւ Բեթղեհէմի մէջ, ինչպէս նախատեսուած էր, զի ոչ տկարանայ առ Աստուած և ոչինչ: Նոր թագաւորին ծնունդը տեղի չունեցաւ պալատի մը շքեղութեան մէջ: Յիսուսի ծնունդ տուող մօր շուրջ չկային պալատական կիներ կամ դայեակներ: Ան հազիւ յաջողած էր գտնել անկիւն մը՝ քարայրի մը մէջ, տաքցուած կենդանիներուն շունչով: Նորածինին մարմինը փաթթուեցաւ խանձարորով և դրուեցաւ մսուրի մը մէջ: Երբ անգամ մը եւս կը կարդանք Աւետարանին էջը որ նկարագրուած են Յիսուսի ծնունդին պարագաները, այն ատեն կը հասկնանք թէ նոր թագաւորին իշխանութիւնը չէ՛ յայտն յերկրէ, իշխանութիւն մը չէ՛ որ կ'իշխէ սուրով և բռնութեամբ, որ կը ստրկացնէ մարդը, այլ փրկագործ իշխանութիւն մը, որ կը վերականգնէ մարդուն մէջ Աստուծոյ որդիութիւնը, կ'ընէ բոլոր մարդիկը հաւասար, ազատ, ամբողջական

Յիսուսի ծնունդը չյայտարարուեցաւ աշխարհի ինչպէս կը յայտարարուին թագաւորագուններուն և մեծերուն ծնունդները, փողայարութեամբ, մունետիկներով և տօնախմբութեամբ: Յիսուսի ծնունդը ծանուցուեցաւ եր-

գով մը, որ կուգար քարձունքներէն: Պարզ փառաբանութիւն էր Աստուծոյ՝ քարձունքներուն մէջ, աւետիս էր խաղաղութեան և խոստում հաճութեան: Նոր թագաւորին ծնունդին առիթով աւետուած խաղաղութիւնը դաշինք մը չէ՛ր կնքուած պետութիւններու միջեւ, որպէսզի դադրին պատերազմերը և վերանան թշնամութիւնները: Յիսուսի քերած խաղաղութիւնը հիմնուած է դաշինքի մը վրայ մարդուն և Աստուծոյ միջև, ուխտի մը, Նոր ուխտի մը վրայ, որ կը վերականգնէ մարդը որդիութեան իր իրաւունքին մէջ: Խաղաղ է այն հոգին միայն, ուր Աստուած կը բնակի, խաղաղ և ուրախ է այն անձը, որուն մէջ անգամ մը ևս կը մանկանայ Յիսուս: Ան որ կը գիտակցի թէ ան ծնաւ մեզի համար, մեզմէ իրաքանջիրին համար, ան գիտէ թէ ծնաւ մեզ այսօր Փրկիչ, որ է Օծեալ Տէր, ի քաղաքի Դավթի, Ան ծնաւ որպէսզի մեզմէ իրաքանջիրը ծնելէ ետքը մարմինէն, ծնի անգամ մը եւս Հոգիէն, ծնի՝ հայր ունենալով զԱստուած և մայր ունենալով սուրբ Եկեղեցին: Նոյն աւագանէն ծնած ամեն անձ որդիական կապով կը կապուի Աստուծոյ հետ և եղբայրական կապով՝ իր նմանին հետ: Համամարդկային եղբայրութեան թագաւորութիւնը խաղաղութեան ճանապարհն է որ կը սկսի Բեթղեհէմէն և կը բոլորուի ամբողջ աշխարհի շուրջ:

Սիրոյ տիրապետութիւնն է ան, որովհետև ան որ սիրել գիտէ, ա՛ն է որ ծնած է Աստուծմէ, ինչպէս կ'ըսէ Յովհաննէս Աւետարանիչը:

Ա. Ծնունդի Այրը քարոզ մըն է սիրոյ, որ կը քակէ բոլոր պատուարները հարուստին և աղքատին, հզօրին և տկարին, մեծին և պզտիկին միջև: Վայրն է ան, ուր եկան Արևելքի թագաւորները իրենց թանկագին նուէրները դնելու աղքատ մսուրին մէջ պսակած Մանուկին առաջ, և խոնարհելու իրենց թագաւորական անցաւոր փառքէն, Մանուկ թագաւորին առջև, որուն հաստատած թագաւորութեան վախճան մի՛ լիցի: Անոնք եկան, որովհետև հաւատքի աչքերով տեսան աստղը՝ Բեթղեհէմի երկինքն ի վեր: Տեսան և հաւատացին թէ կատարուած է Աստուծոյ խոստումը, խորհուրդ մեծ և սքանչելի՝ և թէ՛ ծնաւ նոր արքայ ի Բեթղեհէմ քաղաքի:

Վստահ եմ թէ շատեր կան այսօր և, մեծամասնութիւն են անոնք, որոնք չեն հաւատար անցեալի հրաշքին և չէ՛ն հաւատար նաեւ այսօրուան աստուածային միջամտութիւններուն մարդոց աշխարհին մէջ: Անոնք կը զարմանան թէ ինչպէ՛ս կարելի է քսաներորդ դարու վերջաւորութեան պատմել Յիսուսի կուսական ծնունդը, աստղին երեւումը, մոգերու երկրպագութիւնը և Յիսուսի յափտեցական թագաւորութիւնը: Անոնց որոնք չէ՛ն հաւատար հրաշքին, կ'ըսենք. քննեցէ՛ք մեր պատմութիւնը և պիտի գտնէք թէ ան շարք մըն է հրաշքներու և նախախնամական միջամտութիւններու:

Աստուածային հրաշք չէ՛ր որ մարդ մը եկաւ Հայաստան աշխարհ՝ պարթեական ազգէն, Գրիգոր անունով ու մաքրեց մեր երկիրը յունահռոմէական տաճարներէն և հելլենիստական արձաններէն, սրբեց մեր հողը պարսկական ատրուշաններէն և ծնաւ մեզ իբրև նոր ժողովուրդ, կոչուած ի Քրիստոս, բաժին Տեառն և ժառանգակից Քրիստոսի:

Հրաշք մը չէ՛ր Մեսրոպ Մաշտոցի աչքերուն՝ յայտնութիւնը լուսաշող գիրերուն, որոնցմէ ծնունդ առաւ ոսկիի նման մաքուր հայ լեզուն և մեր երկրէն դուրս նետուեցան ասորի ու յունական լեզուները, տեղ տալու համար քրիստոսադատան մշակոյթին, որ մեր սիրտերը լեցուց ազգային հրապարտութեամբ և մեր գիտակցութիւնը կերտեց իբրև հայ:

Հրաշք մը չէ՛ր որ մեր երկիրը կոխկոտող բազում արշաւանքներէն ետքը, միշտ նոր ծնունդով մը վերածնաւ մեր Հայրենիքը և մեր նահատակ-

ուած քաջերու գերեզմանները վերականգնեցան իբրև յաղթանակի կամարներ:

Ո՛վ սորվեցուց մեզի առողջ պահել մեր հոգին, հայ հոգին եթէ ոչ Աւետարանը:

Ո՛վ եղաւ արթուն պահակը մեր ժողովուրդի հաւատքին եթէ ոչ մեր եկեղեցին, հայ հոգիին տունը, որուն աւագանէն կը ծնի ամէն հայ: Այնտեղ՝ չե՛ն մեռնիր մեր սուրբերը և չի՛ տկարանար իբրև ազգ ապրելու մեր կամքը: Այնտեղ չի՛ մարիր Լուսաւորչի կանթեղը, որովհետև մեր յոյսը դրած ենք մեր հայրերու պաշտած Աստուծոյ վրայ և հաւատացած ենք անոր հրաշագործ ներկայութեան մեր մէջ, անոր թագաւորութեան Հայաստանի հողին վրայ: Մեր եկեղեցին է որ պիտի կրկնէ միշտ ձեր բոլորի ականջին թէ Քրիստոս ծնաւ և յայտնուեցաւ երկրի վրայ, մտնելու համար մարդոց սիրտերուն մէջ և երկինքներ բանալու համար այնտեղ: Ան մարդացաւ ամէն հայու հոգիին մէջ բանալու համար ակօս մը, որ կը տարածուի և կ'երկարի մինչեւ երկինք: Ան բացաւ իւրաքանչիւրիս առջեւ երկինք տանող գաղտնի ճամբայ մը, որով տկար մարդը կը զօրանայ, մեղաւոր մարդը կը սրբանայ, անկեալ մարդը կ'աստուածանայ, երկիրը կ'ուրախանայ և երկինքին վրայ նոր աստղեր կը ծնին:

Լա՛ւ հասկացեք թէ ինչ է պատահածը մեզի այսօր: Նոր հրաշք մը կը կատարուի մեր աշխարհին մէջ: Մեր եկեղեցիներու խոնարհուած քարերը դարձեալ կ'աղաղակեն և կ'երգեն Աստուծոյ փառքը: Աստուծոյ թագաւորութիւնը կը յայտարարուի նորէն ու նորէն, զի ծնաւ մեզ այսօր Փրկիչ, որ է օծեալ Տէր: Ինչպէս Ան եկաւ աշխարհ այրի մը խեղճութեան մէջ, այնպէս ես մեր եկեղեցիին զօրութիւնը կը ծնի այսօր մեր տկարութենէն: Ո՛վ կրնայ կասկածիլ թէ թագաւորութեան նորա վախճան մի՛ լիցի:

Տասնըեօթը դարեր առաջ Հայաստան աշխարհը ապրեցաւ Յիսուսի ծնունդը և շարունակեց ապրիլ զայն ամէն անգամ որ նայեցաւ Արագածի բարձունքին փնտռելու համար մե՛ր աստղը՝ լուսաւորիչի կանթեղը, ան որ կ'երեւի ամէն հայու ով անմեղ է, լիքը սիրով ու հաւատով անասան, ով նայում է վառ յոյսերով դէպի հայոց ապագան...:

Դուք որ եկած էք դժուար այս օրերուն տօնելու Յիսուսի Ծնունդը Էջմիածնի Մար Տաճարի կամարներուն տակ, հաւատքով նայեցէք Իջման Ա. Սեդանին ու այնտեղ պիտի տեսնէք յաիտենականութիւնը Աստուծոյ թագաւորութեան մեր երկրի՝ Հայաստան աշխարհի վրայ: Անոր իղին հետ խառնուած պիտի տեսնէք արցունքը մեր հայրենապետներուն, որոնք Լուսաւորիչի գահը բարձրացան հովուելու համար բանաւոր հօտը և առաջնորդելու համար զայն վերականգնումէ վերականգնում:

Դուք կ'ապրիք դժուար օրեր: Թող դժուարութիւնները չտկարացնեն ձեր կամքը: Ականջ տուէք մեր մեծ հովուապետի խօսքին, որ յորդոր է սիրոյ, խրատ է համբերութեան, ներշնչում է հաւատքի: Աղօթեցէք մեզի հետ որ Աստուած երկարէ անոր կեանքը: Խնդրեցէք մեր հայրերու Աստուածէն որ պահապան ու պաշտպան մնայ մեր երկրին և զօրաւիգ մեր ժողովուրդին, որպէսզի շարունակենք ապրիլ յոյսով, այն յոյսով որ լի է անմահութեամբ:

Նոյն յոյսով ողջունենք զիրար և ըսենք՝

ՔՐԻՍՏՈՍ ԾՆԱԻ ԵՒ ՅԱՅՏՆԵՑԱԻ: